

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմ. 1925, էջ 292)

ԾԳ. և ԾԳ.

ԳԵՂՈՐԱՅՔ ՄԱՆՈՒԿ ԲԺՇԿԱԿԱՆ

Այս ձեռագիրս ալ մէկ ուրիշ աշխատութիւնն է Մանուկ Պոնտապիին, որ հոս կը կրէ նաև ԲՅԵՍԵԱՆ մականունը, որով ճանչցուած է և իւր որդին՝ Վենետիկի Միսիթարեան բազմաորդին Հ. Մինաս Վ. ԲՅԵՍԵԱՆը:

Ծերկայ հատորս հաւաքածոյ մ'է, և կը կրէ հետեւեալ երեսագիրը.

Գիրք որ կոչի ԵՃԱՅ համառօտ. և պարտականեցեալ աստուծոյ, զբազմացել ղեղութայն շահաւետս և զարմանալիս:

Շարադրեցեալ ի վաղեւոյ ժամանակաց ի ունեւնէ ձարտար և նրամախ թշկապեւտե և ներկուս կենդանատուէ,

Եւ նարդեմիս օրինակեցեալ ձեռամբ Մանուկ ԲՅԵՍԵԱՆ, կոչմամբ ևեր պոնտապոյ:

Եւ սակս շահաւետորեան ամենից ընդերձօղաց, և մանաւանդ ի շնորհս հանգոյն եղելոց համարակացունից նորասարժից, որ ձեւեմին և այսմ հետեւորորեան:

Ի հայրապետութեան տեսան ամենից Հայոց Սահակ Կարուդիկոսի և ժայրացուն Պատրիարքի Վաղարշապատո՝ անդգին կոչեցելոյ:

Յամի տեսան 1206. և ի ամիս օգոստոսի սկիզբն.

Գծագրեցաւ ի կափա մայրաքաղաքի:

Նախորդ բժշկարանին ժամանակակից է այս, այսինքն (1206 + 551) = 1757ին է գրուած, և է իսկական ձեռագիրը Մանուկ Պոնտապիին:

Հաստ կաշեպատ կողքերով հատոր մ'է, մեծութիւնն է 21 հրդ. մեզր, լայն-

նութիւնը 15 հրդ. մեզր, իսկ թանձրութիւնը 2,5 հրդ. մեզր: Ունի 1768 թուահամարը:

Ունի 241 էջ գրութիւն, 120 թերթի մէջ ամփոփուած, գիրը նոսր է ազնոյ և թիչ մը շեղագրի նման:

Անունը՝ ինչպէս տեսանք՝ հիմնգործարակ է, որ ըսել է՝ հինգ հարիւր տեսած ղեզ պարունակող:

Քացի երեսագրէն ունի Յառաջարանութիւն մը, բաւական հետաքրքրական, որ

Բան առ ընթերցողս նրբամիտ

վերնագրին ունի և է հետեւեալը.

« Եւ Քանդի առաւել ի քրորեմէն աղեացս, և և առատութեմէն սիրոյս՝ առ արտաքնոց գիտութեանց, հաւնդիս սիրով հաւանալ իմ « առ թշկապեւտ մակացութեան, և նախաւ « մեծար ցոյ ընտրեցի ի վերայ յետոյց ար- « հետոյց, որ և իսկ՝ արդէն և ընդ մա- « կացութեան թշկի և այլն: Գիտելի է արդ՝ « զի ի ձեռն զգոնութեան յախախի գրոյսն « ոստիսն, հանգոյն կնոյն զգոնամտի, որ « ոչ պաշտելով գրիցն, և ոչ թողով առ ի « իտրտակել զենկեղցին, ասնայ թեկտոր « իմն, և յանկարծակի՝ ընկեց ի վերայ « զյիսոյն արիւմէքս, և այնպէս ձմեռաց « զգրոյսն նոյնոյ, իսկ՝ ոչ երէ թեկտորեան, « և ի ձեռն քանքացեալաբար ներոյն սպան, « այլ՝ երէ ոչ ի ձեռն անօր և քափան- « ձիք գորոյն (այսինքն իմաստութեամբն):

« Եւ զի ի վաղոց իսկ հետե ի սերդ սո- « բին վասեցեալ էի, որոյ վասն կամ եր « ինչ, զի զծագրիցէյ իմով ձեռամբն գր- « զուկ իմն, սակայն առաւել քաղմութիւնք « ըզբաղանացս առիպելով և յոգնադիմի պա- « ռաւանդութիւնք վերաշարժելով և կրելով « զբաղմացել զիշտս և տուգանս և յունելով « երկրէ նրկի վասն զագրութեան քաղաքին « անմարք եր բոսն մոծանել առ այս, և « մանաւանդ մեծացոյն առիւն այս եր զի « ոչ տեսանէի զանձն իմ, գոյ ներկուս, և « քանից քալ հմտացեալ, և զգոնութեանս « իմաստաւիրաց արիւրաբար վերաբոսող.

« այլ՝ ղեմախն պատգեալ ի կրօնաբեկն շաւ-
 « զսց իմաստասիրաց: Արդ ի ներ նայսմ
 « ամանակիս՝ ի քաց թողով համայն նուսա-
 « տաօրինն է քացաքարչելով տրամախոնո-
 « թիւն իմ ի խենկէպարտայից խոկմանց եւ
 « պեղելով և կարծրացուցանելով սիրտ իմ
 « յայժմ երբաբար եղչերուսքադելով և պա-
 « ճուճեալ գնդազարդ պատկերացրով գծա-
 « գրեցի զնակիրճ մոսափրեստաքս (այսինքն
 « ինկց հարիւրակն) որով ի տես մանկու-
 « թեան իմոյ սովիմք վարժեցաւ, և տակաւին
 « կրքերոց նմ միւն ի վաղջան կենաց իմոց,
 « և որոյ վասն յայժմ քախանձանօք և կող-
 « կողպահն աղաչեմ և խնդրեմ առ քա-
 « ղիմիտ ընդերձօղացող զիս անբասար առ-
 « ճիցեք վասն մոռմաներայ անհարթ ձեռինս
 « քաւ այս. գիտեմ իսկապէս և խոստովա-
 « ճեմ զանձն իմ անկիրթ. ոստի կրկնակի
 « աղաչեմ, անճեղադիր շինելով յիշխայիք
 « զմեզ աստուածընկալ յարօքս ձեր և դուք
 « յիշեալ և ողջ յերուք ի շնորհ քարձրե-
 « լոյն ամեն, որ եմ

« Ամենայն նուստտ՝ ծառա
 « մանուկ պոնտագի
 « կոչմամբ եւր թշկնեան ».

*

Ո՛րչափ համեստ է Մանուկ Պոնտացին
 իր այս տողերով և որչափ խոնարհ է կը
 տեսնենք որ մանկութենէն սկսած օրոպ
 եղած է բժշկական բարձր արուեստին,
 զոր հարկաւ իւր բազմաբղիւն Հօրը ըով
 ուսաւ և կրթութեամբ անոր բազմամեայ
 փորձառութիւններով: Բայց ինքը վշտա-
 հար մէկն է միանգամայն, որովհետեւ կ'ըսէ՝
 Թէ քազմացեղ վիշտեր կրած է, տուգանք-
 ներոս դատաւարտուած, և երկրէ երկիր
 յուսաական հալածուած: Ներկայ ժամա-
 նարի տագնապալից օրերէն տարբերու-
 թիւն չունէին ուրեմն Մանուկ Պոնտացին
 ապրած օրերը, այն ատենն ալ՝ հալածա-
 կան էին անկասկած Հայերը, որոնց հետ
 և մեր այս բժիշկը ու իր այլքը, Բայց
 գովելի է նա, որ հակառակ հայրս ըլլոր
 վշտակութիւններուն՝ կ'ուխտէ սիրել միշտ
 բժշկութիւնը և մինչև կեանքին վերջը ու-

սումնասէր մնալ, որչափ խրատատու են
 մեզ Պոնտացին խօսքերը, որչափ պար-
 տաւոր ենք հետեող ըլլալ անոնց, ու նաև
 գործադիր...:

*

Պոնտացին այս գործը, ինչպէս ինքն
 ալ կը յայտնէ, քաղուած է ուրիշ հեղի-
 նակէ մը, որուն անունը չի տար. բայց
 զայն թղթատելով կը տեսնենք, որ մեծ
 մասամբ Ամիրտուլվաթի Անգիտաց Անկետէն
 առնուած է այն:

Այբուբենի վրայ շարակարգուած դե-
 դերու ցուցակ մ'է. ամէն մէկին յատկու-
 կութիւնները համառօտակի ներկայացուած,
 որոնց համար յետոյ համառօտագրութիւն
 մ'ալ կը զնէ, և ապա՝ զանազան հիւան-
 դութիւններու դէմ հարկաւոր եղած դե-
 դերը կը պատուիրէ:

Ուրիշ բժշկաբաններու հետ զայն բաղ-
 դատելով հետաքրքրական ոչինչ կը գտնենք
 մէջը, բայց պէտք է խոստովանիլ, Թէ
 խղճամիտ աշխատութիւն մ'է, մեծապէս
 պատուաբեր Հեղինակին, որ հալածանքի
 ու տառապանքի մէջ ընկնուած՝ կրցած
 է համբերութիւն ունենալ այս հաւաքա-
 ծոյն պատրաստելու, « սակա շահաւետո-
 րեան նորավարժից և որ հետեին այսմ
 հետորոտքեան », և այսու՝ իւր Հօրը հա-
 րազատ որդին ըլլալու:

*

Պոնտացին բժիշկներու ուղղուած կարգ
 մը խրատներ ալ կը գրէ, և յետոյ աստ-
 դերու ազդեցութեան վրայ ալ քանի մը
 էջ բան գրելով, կ'աւարտէ իւր գործը,
 և վերջին էջին վրայ կ'արձանագրէ հե-
 տեալը.

« Ծաներոք օ՛վ քարեքարոյ ընդերձողք,
 « այս գիրքս շատ զարմանայի է, ո՛չ թե
 « միայն հեքիմի պէտք է. այլ՝ բոլոր մարդ-
 « կան. ասացի՛ք բոլոր մարդկան այնոր
 « համար պիտոյ է, որ թշկական դպտիրն
 « կոս առպի և կուսի, որ իար անձինք
 « կարելի է թե թշկութիւն անէ. այսինքն
 « կերպարոն գոհեա կոս ընտրէ և վնասա-

« կարև չի ուզեր. նմանապես և դայար միր. « քերն կու ընտրե և այսպես թշկական վա. « րոպ կու կենցաղաւարի: Եւ այս բառ լիցի, « քանգի յորժամ ընթերնուք և կարբաք, « յիշեցէք զայս գիրքս գրողն ի տէր, հան, « դերձ ամենայն ծննդօքն և ծնողացն յիւ. « պէս յիշողի՝ յիշեալ յինի ամենայնի ի « Տեսակն ամենակարողն Աստուծոյ մերմէ, « և ի փրկչէն Յիսուսէ Քրիստոսէ, որոմ « ամենայն՝ որով ամենայն, առ որ ամե. « նայն փառք և գոհութիւն և թագոմ շնոր. « հակադարին աղաքս եզակի գրութեան և « մարդասիրութեան, որպէս եր ի սկզբանէն « այժմ և միշտ և ամենայն յաւիտեանս « յաւիտենից Ամէն »:

ՄԻՒ.

Մանուկ Պոնտացիի վերոյիշեալ բժշկա. բանէն հատ մը ևս ունի Ս. Ղազարու վանքը, բայց ընդօրինակութիւն է և հա. ւատարիմ ընդօրինակութիւն: Կը կրէ 1644 թուահամարը, ունի 21 հարբերողամեղը մեծութիւն, 15,5 հարբերողամեղը լայ. նութիւն և 2,5 հարբերողամեղը թան. ձրութիւն, որու վերին եզերքին վրայ կը կարդացուի ՄԱՆՈՒԿ ԲԱՐՈՐ ԵՐԿԱԹԱԳԻՐ: Այս ձեռագիրը կը բաղկանայ 174 թերթէ, 348 էջ գրութեամբ, որ խիստ զեղեցիկ նոսր է բամբակեայ հաստ թուղ. թի վրայ:

Թայտնի չէ՝ թէ ո՞վ եղած է ընդօրինա. կիշը, թուական չէ գրուած մէջը, և բա. րեքախտաբար կը յիշուի ՄԱՆՈՒԿ ՊՈՆ. ՏԱՅԻՆ:

Միայն թէ այս ընդօրինակութիւնը երե. սագիրին մէջ ուրմարիտեակ կը կոչուի, մինչ ընագիրը տեսանք թէ հիմնարի. րեակ էր:

Ահա այդ երեսագիրը՝

ԳԻՐԳ ՈՐ ԿՈՁԻ՝ ՉՃ ԱԿ

Օրինակեցեալ շանիք և ձեռամբ ի Մանու. կի կոլիցեալ թշկեանս:

Թաղաքս դիրտարեան դեռահասակ նորա.

վարժից ռուսմաստիւրաց որք հետեւին ի այսմ հետտորութեան

ի փառս անգարագրելոյն Յիսուսի և ի պա. տիս ամենեւեանիցելոյ Մօրն նոյնոյ:

Իսկ՝ գծագրեցաւ ի քափարաքաղաքի, և ի բլլին՝

*

Պափրաքաղաքը Պաֆան է, բայց զրոգը թուին բառին ըով կը մոռնայ տարին աը. ձանագրելու, և շատ հաւանական է, որ բաւական տարիներ վերջը ընդօրինակուած ըլլայ այս:

Ունի նոյն այն Թառաջաբանը, բայց տեղ տեղ կարգ մը յաւելուածներով. զոր օրինակ գրեցը շարագրելու առթիւ երբ իւր կրած տառապանքներուն կ'անդրա. դառնայ՝ այս ձեռագրին մէջ կ'ըսէ.

« Եւ զի ջան եր ինձ ի հերոսն հետե, « զի գծագրեցի իմով ձեռամբ գրգռչ իմն, « ստկույն առանկ թագմութիւնք գրադանացս « ստիպելով ո՞չ իսպառ յինէյի ձեռամուռիս. « զի ժամ մի ո՞չ անկորր անցանի անձն « իմ տակաւին. աշխ ամենայնի պաշարեայ « եմք ի տխրութիւնս զաղիտս, և մերք՝ ի « խորութիւնս 'գորս գրեք ջնսն տրամա. « խոնարինն իմ խանգարեալ է) և զայս « արժանապէս կրեմ միկնչ մեանայ իցեմ, « զի ո՞չ և մարք զերժանեկն արդար վճռոյն « անտի՝ որ ասէ քրտամք երեսաց քոց կե. « րիցես զհաց »:

Ինձ կը թուի թէ այս առոգիրը ընդօրին. նակիչին կողմէ ներմուծուած են, կամ քանի մը տարի վերջը թերեւ ընդօրինա. կուելով, նոյն իսկ Մանուկ Պոնտացիին թեւադրութեանը մէջը գրուած են այդ խորութիւնս խանգարեալ և այլն խառքերը:

*

Թառաջաբանութեան վերջին մասն ալ փոփոխուած է և է սապէս.

« զի անբասիրս առնիցէք վասն մոռանելոյ « աննարք ձեռիսն տա այս. վասն որոյ գի. « տակ իսկ եմ զի թագմիցս սղաքեցաւ առ. « կիրք մանկութեանս, զի գրեալ է քե սղա.

« ի՞նչ մարդոյ է ինչ յնական, ապա «րչտփ
 « մանկուհաց անկրթից: Ուստի կրկնակի
 « կողողացին աղաչեմ, զի բարց ուրուք
 « փաստի՛ բնկարարութք գրգռեաքես ման-
 « ճայս՝ ըստ որում և յինկն եղկիոյս բն-
 « ժայի պատուով և հնգարեամբ, առ բա-
 « րեպաշտութեան ձեռքով, որ և դուք յի-
 « շնայիք զմեզ մերք միով հայր մերի աւ-
 « տուածնկնայ յաղօրս ձեռք, և դուք յիշեալ
 « և ողջ լերութք ի շնորձ Բարձրերոյն Ամեն,
 « որ եմ ապիկար աստուծոյ յիստսի և հա-
 « մօրեկ քարեպաշտից Աստուածասիրոց:

« ՄԱՆՈՒԿ ՊԱՍՔԵԱԼ ԵՒ ԱՆՊԻ-
 « ՏԱՆ, ԵՒ ՈՐԴԻ ԲԺԵՆԿ ԻՍԱ-
 « ՀԱԿԵԱՆ, ԿՈԶՄԱՄԲ ԵՒԵԹ
 « ՊՈՆՏԱՅՈՒՑ »:

*

Բայց պարունակութեանը մէջ բնա-
 տարրերութիւն չի կայ, և կը պակսի
 միայն իր վերջաբան գրուած տողերը,
 զորս ներկայացուցի վերև:

ՏԵԹԵ. ՎԱՆՐԱՄ Յ. ԹՈՐՈՍԵԱՆ
 (Շարունակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ս. ԵԹԻՄԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԷԶ

(ՏԿ. ՎԵՆԵՏԻԿ 1836)

1. Ազգայէլ

Դիցէ, ասէ, Ահարոն ի վերայ երկուց
 նոխազաց վիճակս երկուս. վիճակ մի
 յանուն տեառն և վիճակ մի ազգայէլի
 յանապատ... Որպէս նոխազն զի արածի
 զերանութիւն երկրի և զառնայ. այլ ոչ
 եթէ զօրութիւն ինչ այլ է ազգայէլ, այլ
 որպէս անապատն կաղէս... Սոյնպէս և
 ազգայէլն, զի յիշեացեն զաստուծութիւնն
 նորա և զբարկութիւնն նորա՝ որ եղև ի

վերայ նոցա յանապատի անդ. և արգելցին
 նոցա ի մեղաց, զի ազգայէլը՝ սաստկու-
 թիւն Աստուծոյ անուանի (Եփր. հտ. Ա.
 վ. 222-Յ):

Եփրեմի ակնարկած հատուածը կը գրտ-
 նուի Դևտ. ԺԶ. 8, որ մեր Թարգմանու-
 թեան մէջ սապէս է. «Եւ արկցէ Ահարոն
 ի վերայ երկուց նոխազացն վիճակս. վի-
 ճակ մի Տեառն և վիճակ մի արձակելոյ»:
 Ազգայէլին համապատասխանն է արձա-
 կելոյ. Երբայական բնագրին մէջ ասոր
 դէմ կը գտնենք յՄԻՆ՝ 'azāzēl, որուն
 իմաստը անծանօթ է. հաւանաբար կը
 նշանակէ անապատներու մէջ բնակող չար
 ոգի մը (տե՛ս Gesenius, Բառ. իբր 1910,
 էջ 570): Եթեանասունը հասկցած են
 ազգատ արձակուած նոխազ, ինչպէս կը
 դնեն նաև յաջորդ 10 և 26 համարներուն
 մէջ: Ասորական Թարգմանութիւնը կ'երե-
 ւայ թէ լաւագոյն համարեր է պահել
 երբայցիք բառը, որմէ տառադարձուած է
 նաև հայը: Եփրեմի վերի հատուածին մէջ
 յիշուած չորս ձևերէն առաջինը ձեռագրին
 մէջ գրուած է ազազի, զոր հրատարա-
 կիչները միանանուն համաձայն զարձուցե-
 ր են ազգայէլ, մենք պահեցինք ձեռագրին
 ձևը՝ քանի որ երբայականին ճիշդ համա-
 պատասխանն է:

2. Անառակագնաց

Լուեցո՛, Տէր, զբերան իմ բամբասելոյ...
 զոտս իմ անառակ գնացից (հտ. Դ. էջ
 240): Ասոր դէմ Գիրք աղօթից ասացեալ
 Ս. Եփրեմի Խուրին ասորւոյ, Երուսաղէմ
 1870, էջ 69 կը դնէ «Եւ զոտս ի յան-
 առակ գնացս երթալոյ», որ անշուշտ լա-
 ւագոյն ընթերցումն է, որովհետև այս-
 պէս գեղեցիկ կը յարմարի միւս նախա-
 դասութեանց կազմին, ուր իւրաքանչիւրը
 բացառական հոլով աներևոյթով մը կը
 վերջաւորի. «Լուեցո՛, Տէր, զբերան իմ ի
 բամբասելոյ և զլեզու իմ ի չար խօսելոյ,
 զայն իմ յարատ հայելոյ և զականջս իմ
 ի չարալուր լսելոյ, զձեռս իմ (ի) յափըշ-
 տակելոյ և զոտս իմ ի յանառակ գնացս